

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/1

12 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց քաղաքացի Գոհար Մովսիսյանի 09.07.2013 թ-ի դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.06.2013 թ-ի թիվ 1411295 վարչական ակտի դեմ:

«ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.06.2013 թ-ի թիվ 1411295 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է.

Ֆիզիկական անձ Գագիկ Գեղամի Աբրահամյանը հունիսի 1-ից կազմակերպել է խաղային շահումով ապարատով ծխախոտի շահում՝ առանց «Ը օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան պետական գրանցման՝ ապօրինի գործունեություն, ինչպես նաև առանց համապատասխան լիցենզիայի: Առ արձանագրման պահը Ֆիզիկական անձ Գագիկ Գեղամի Աբրահամյանի կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամուտը կազմել է 6000 դրամ:

Ելնելով վերոգրյալից որոշվել է Ֆիզիկական անձ Գագիկ Գեղամի Աբրահամյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար, համաձայն «Հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի գանձել տուգանք՝ այդ գործունեության ընթացքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության 50 %-ի չափով, բայց ոչ պակաս 200.000 դրամից, ինչպես նաև, նույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված խախտումներ հայտնաբերելու դեպքում, գանձել լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում՝ գումարով 5.000.000 դրամ:

Վարչական ակտով գանձման է առաջադրվել ընդամենը 5.200.000 դրամ:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ 21.06.2013 թ-ին «ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում «ԿԱ ՊԵԿ ՕՀ վարչությունից փաստաթղթեր են ստացվել քաղաքացի Գագիկ Գեղամի Աբրահամյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ «ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում քաղաքացի Գագիկ Գեղամի Աբրահամյանի նկատմամբ քրեական գործի հարուցման հարցը պարզելու նպատակով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող

վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ 09.07.2013 թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Քաղաքացի Գոհար Մովսիսյանի 09.07.2013 թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ